

COVID-19-ի ենթատեսակներ

Հիմնական փաստեր

- Ենթատեսակները վիրուսների փոփոխված ձևեր են՝ մուտացիաներ: Դելտա ենթատեսակը ներկայումս վիրուսի ամենատարածված ձևն է, որն ԱՄՆ-ում վարակի պատճառ է դառնում:
- Դելտա ենթատեսակը տարածվում է ավելի արագ, քան Նախնական COVID-19 վիրուսը: Այն չպատվաստված մարդկանց մոտ կարող է առաջացնել ավելի ծանր հիվանդացություն:
- COVID-19-ի պատվաստանյութերը արտակարգ արդյունավետ են Դելտա ենթատեսակի պատճառով ծանր հիվանդացության և մահվան դեպքերի կանխարգելման համար: Սակայն պաշտպանված լինելու համար շատ կարևոր է լինել լիարժեք պատվաստված:

Ի՞նչ են ենթատեսակները:

Շատ վիրուսներ հաճախ փոխվում են մուտացիայի միջոցով: Այս փոփոխումները ավելանում են և ստեղծում վիրուսի՝ թեթևակիորեն տարբերվող տարբերակներ, որոնք կոչվում են «ենթատեսակներ»: Երբեմն նոր ենթատեսակները հայտնվում, իսկ հետո անհետանում են: Պատահում է, որ նոր ենթատեսակները շարունակում են գործել: Սրանք կոչվում են մտահոգիչ ենթատեսակներ, եթե ապացուցվում է, որ դրանք ավելի հեշտորեն են տարածվում, առաջացնում են ավելի ծանր հիվանդացություն, առավել դժվարությամբ են հայտնաբերվում, բուժվում կամ կանխարգելվում պատվաստանյութերի միջոցով: Գիտնականները շարունակում են ուսումնասիրել և հետևել այս ենթատեսակների զարգացմանը:

Միացյալ Նահանգներում հայտնվել են COVID-19-ի շատ ենթատեսակներ: Այս պահին Նախնական վիրուսը, որը 2020 թ.-ի հունվարին տարածվում էր, այլևս չի շրջանառվում:

COVID-19 վիրուսի ո՞ր ենթատեսակներն են հայտնաբերվել Միացյալ Նահանգներում:

Հիվանդությունների Կերահսկման և Կանխարգելման Կենտրոնները (CDC) հետևում են Միացյալ Նահանգներում շրջանառվող մի քանի մտահոգիչ ենթատեսակների.

Ենթատեսակի անունը՝	Առաջին անգամ հայտնաբերվել է՝	Առաջին անգամ հայտնաբերվել է ԱՄՆ-ում՝
Ալֆա (B.1.1.7)	Միացյալ Թագավորություն	2020 թ.-ի դեկտեմբեր
Բետա (B.1.351)	Հարավային Աֆրիկա	2021 թ.-ի հունվար
Գամմա (P.1)	Բրազիլիայից ճամփորդածների մոտ	2021 թ.-ի հունվար
Դելտա (B.1.617.2)	Չինաստան	2021 թ.- մարտ

Դելտա ենթատեսակը ներկայումս վիրուսի ամենատարածված ձևն է Լոս Անջելեսի Շրջանում: Այցելեք Հիվանդությունների Կերահսկման և Կանխարգելման Կենտրոնների վեբ-էջը՝ [ինչ Պետք է Իմանալ Ենթատեսակների մասին](#)՝ հավելյալ տեղեկատվության համար:

Արդյո՞ք այս նոր ենթատեսակներն ավելի վտանգավոր են:

Կախված է ենթատեսակից: Այս ենթատեսակներից մի քանիսը լուրջ վտանգ են ներկայացնում հատկապես այն մարդկանց համար, որոնք լիովին պատվաստված¹ չեն, և այն մարդկանց համար, ովքեր գտնվում են [COVID-19-ի պատճառով ծանր հիվանդանալու ավելի բարձր վտանգի տակ](#): Դելտա ենթատեսակը մտահոգիչ է, քանի որ այն

¹ Դուք համարվում եք լիովին պատվաստված COVID-19-ի դեմ, եթե անցել է երկու (2) շաբաթ Pfizer կամ Moderna պատվաստանյութերի երկրորդ դեղաչափի կամ Johnson & Johnson պատվաստանյութի միակ դեղաչափի ընդունումից հետո, կամ Առողջապահության Զամաշխարհային Կազմակերպության կողմից արտակարգ իրավիճակներում օգտագործման ցուցակում ընդգրկված պատվաստանյութի ընդունումից հետո: Տե՛ս [լիովին պատվաստված](#) էջը՝ հավելյալ տեղեկատվության համար:



COVID-19-ի ենթատեսակներ

շատ ավելի արագ է տարածվում, քան նախնական վիրուսը և այլ ենթատեսակները: Այն կարող է նաև լիարժեք պատվաստում չստացած մարդկանց մոտ առաջացնել ավելի ծանր հիվանդացություն:

Արդյո՞ք COVID-19 պատվաստանյութերը պաշտպանում են ենթատեսակներից, այդ թվում՝ Դելտա ենթատեսակից:

Այո, պաշտպանում են: Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոնները շարունակում են ուսումնասիրել պատվաստանյութերի արդյունավետությունը մարդկանց COVID-19-ից պաշտպանելու գործում: Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոնները պարզել են, որ ԱՄՆ-ում հասանելի բոլոր 3 պատվաստանյութերը բարձր արդյունավետություն ունեն մարդկանց Դելտա ենթատեսակի, ինչպես նաև այլ հայտնի ենթատեսակների առաջացրած ծանր հիվանդացությունից և մահից պաշտպանելու հարցում: Համեմատած չպատվաստված մարդկանց հետ՝ լիարժեք պատվաստում ստացած մարդկանց մոտ ավելի քիչ է COVID-19-ով վարակվելու հավանականությունը:

Ի՞նչ է բեկող վարակը:

COVID-19 պատվաստանյութերը նվազեցնում են COVID-19-ով վարակվելու վտանգը, սակայն քանի որ պատվաստանյութերը չունեն 100%-անոց արդյունավետություն, քիչ տոկոսով մարդիկ, որոնք լիովին պատվաստված են, կարող են նորից վարակվել: Սա կոչվում է «բեկող վարակ»: Բեկող վարակները սովորաբար թեթև հիվանդացություն են առաջացնում: Եթե դուք լիովին պատվաստված եք, վարակվելու, հիվանդանալու, հոսպիտալացվելու կամ մահանալու վտանգը շատ ավելի ցածր է, քան չպատվաստված լինելու դեպքում: Որոշ մարդիկ, ովքեր լիովին պատվաստված են և վարակվում են Դելտա ենթատեսակով, կարող են վիրուսը փոխանցել մյուսներին: Սա վիրուսի տարածման ընդամենը մի փոքր մասն է կազմում:

Ինչպե՞ս կարող եմ պաշտպանել ինձ ենթատեսակներից:

- **Պատվաստվեք**, եթե դուք 12 տարեկան եք կամ ավելի բարձր տարիքի (տե՛ս ստորև): ԱՄՆ-ում հասանելի COVID-19-ի երեք պատվաստանյութերն ապահովում են լավագույն պաշտպանություն ներկայումս այստեղ տարածվող ենթատեսակների դեմ: Եթե դուք մտահոգություններ կամ հարցեր ունեք COVID-19 պատվաստանյութերի հետ կապված, խոսեք ձեր բժշկի հետ: Եթե դուք արդեն պատվաստվել եք, խրախուսեք ձեր ընտանիքի անդամներին, ընկերներին և հարևաններին ստանալ պատվաստանյութը: Պատվաստումը կդանդաղեցնի ենթատեսակների տարածումը և կնվազեցնի նոր՝ ավելի վտանգավոր ենթատեսակների առաջացման հավանականությունը:
- **Կրեք դիմակ**: Դիմակները շարունակում են հզոր գործիք մնալ՝ ձեզ և մյուսներին պաշտպանելու հարցում: Քանի որ Դելտա տարբերակն ավելի հեշտորեն է տարածվում, [բոլորից](#) պահանջվում է հանրային փակ տարածքներում և բացօթյա մեզա իրադարձությունների ժամանակ դիմակ կրել: Ձեր դիմակը պետք է ամուր ծածկի ձեր քիթը և բերանը և պատրաստված լինի առնվազն երկու շերտից՝ լավ գտելու համար: Եթե դուք այնպիսի միջավայրում եք, որտեղ սերտ շփվում եք այլ մարդկանց հետ, որոնք, հնարավոր է՝ լիովին պատվաստված չեն, դիտարկեք «[կրկնակի դիմակ](#)» (բժշկական դիմակի վրայից կտորե դիմակ կրելը) կամ N95 շնչառական դիմակ կրելը: Այս միջոցները ավելի բարձր պաշտպանություն են ապահովում: Սա հատկապես կարևոր է, եթե դուք լիովին պատվաստված չեք և գտնվում եք փակ տարածքում կամ մարդաշատ բաց տարածքում: Գործում են որոշակի բացառություններ. <http://ph.lacounty.gov/masks>:
- **Հաճախակի լվացեք ձեր ձեռքերը և/կամ օգտագործեք ձեռքերի ախտահանիչ միջոց**, հատկապես հանրային վայրերում լինելուց հետո, որտեղ մակերեսներին շատ մարդիկ են դիպչում:

Այցելեք Հանրային Առողջության Վարչության [COVID-19. Վտանգի Նվազեցում](#) էջը՝ ավելին իմանալու համար:

Ինչպե՞ս կարող եմ ստանալ COVID-19 պատվաստանյութ:



COVID-19-ի ենթատեսակներ

Պատվաստանյութերը հասանելի են ողջ Լոս Անջելեսի Շրջանում և անվճար են բոլորի համար՝ անկախ ներգաղթային կարգավիճակից: Պատվաստումներ իրականացնող շատ կետերի կարելի է մոտենալ և պատվաստվել առանց ժամադրության, կամ կարող եք նախօրոք ժամադրություն ձեռք բերել:

- Այցելեք www.VaccinateLACounty.com՝ պատվաստման համար մոտակա կենտրոնը գտնելու համար:
- Չանգահարեք **1-833-540-0473**, եթե օգնության կարիք ունեք ժամադրություն ձեռք բերելու հարցում, պատվաստման վայր հասնելու համար փոխադրամիջոցի կարիք ունեք կամ ի վիճակի չեք լքել տունը: Զեռախոսային գծերը հասանելի են շաբաթը յոթ օր՝ 8:00-ից 20:30-ը: Նաև 24/7 հասանելի է տարբեր լեզուներով տեղեկատվություն, եթե զանգահարեք 2-1-1:

COVID-19-ի ենթատեսակների մասին ավելին իմանալու համար այցելեք Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոնների կայքէջ՝ [Վիրուսի ենթատեսակները](#):